վանքերի համար։ զորօրինակ մենք գիտենք, որ միևնոյն ս. Կարապետի, ս. Գէորգի անունով գերեզմաններ ունին զանազան վանքեր։ Սակայն հաւաստին այն է, որ Ս. Լուսաւորչի պատուական մարմնի առաջին ժամանակաւոր հանգստարանն եղել է Մանեայ Այրի մօտ հովիւների կազմած կարկառը կամ, ինչպէս Յովհաննէս Դրասխանակերտցին է ասում, «փլո[illegible] դարակը», իսկ վերջին և յաւիտենական բնակարանը Թորդանի շիրիմն էր։

Գ

Թէ երբ և ինչպէս յայտնուեցան և բաժանուեցան Ս. Լուսաւորչի նշխարները, ճշգրիտ տեղեկութիւններ չունինք։ Գիտենք միայն, որ նոքա իրենց վերջին օթևանում չեն մնացել. երախտագէտ սերունդը հանել ցրուել է նորա մասունքներն իբրև սրբութիւններ և մատուցել է արժանի յարգանքը։ Դեռ Ե. դարում Ս. Լուսաւորչի նշխարները Հայոց Եկեղեցու սրբութիւնների մէջ նշանաւոր տեղ էին գրաւում։ Ղազար Փարպեցին պատմում է, որ Ս. Վարդանանց ժամանակ, երբ Հայոց նախարարները Պարսից դռնից վերադարձան Հայաստան, նոցա դիմաւորեցին «դասք պաշտօնէիցն, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին և զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրի-